

մէջէն, համիտեան րէժիմի երանելի օրերուն⁴, երբ ամէն ոտանաւոր փորձող համակրելի բանաստեղծ էր եւ ամէն գրիչ շարժող տաղանդաւոր գրագէտ, եղան գրողներ որոնք «գրական ոչնչութիւն» եւ նման մակդիրներով կ'որակէին այն մէկ քանի հոյակապ էջերը մեր վաղամեռիկ բանաստեղծին⁵, որ եթէ ապրէր, պիտի փութայինք օր մը դասել Սիւսանյոթի եւ Վարուժանի քովիկը: Կ'ակնարկեմ Միսաք Մեծարենցին:

Երկրորդ կէտ մը՝ գոր կ'ուզէի լուսաբանել՝ աւելի մեղադրանք մըն է, թէ ինչո՞ւ փոխանակ մեռած գրողներով զբաղելու, ապրող հեղինակներու մասին կը սարքենք մեր այս գրական ասուլիսները: Որովհետեւ, տիկիներ եւ պարոններ, կը նկատենք որ աւելի շինարար գործ մըն է մեր ներկայ գրողներուն եւ գրականութեան շուրջ համակրութիւն եւ հետաքրքրութիւն ստեղծել,– առանց մոռնալու սակայն մեր գրականութեան անհետացած դէմքերը, որոնց մասին ալ, առաջին առթիւ, պիտի սարքենք մեր յարգանքի համախմբումները, գրական ասուլիսներու նիւթ դարձնելով Արփիարեան, Տէմիրճիպաշեան, Պէշիկթաշեան, Թէրզեան, Դուրեան, Մեծարենց, եւ ուրիշներ:

Իսկ թէ ի՞նչ ուղղութիւն մենք կը դնենք այս գրական ասուլիսներու կազմակերպութեան մէջ: Պէտք է ըսել, տիկիներ եւ պարոններ, որ մեզ թելադրող եւ խանդաւոռող նպատակը ըլլալով առայժմ գրական պզտիկ շարժում մը ստեղծել թրքահայ գրական կեանքի ներկայ լճացած շրջապատին մէջ, մենք առիթը չենք ունեցած մեր այս ձգտումը կապելու ռուէ ուղղութեան հետ, ներկայ գրական ասուլիսները սարքելով այս կամ այն ծրագրին վրայ, այս կամ այն գրական դպրոցին կամ սեռին շուրջ: Առայժմ մեր գլխաւոր ջանքը պիտի ըլլայ զբաղիլ թրքահայ գրականութեան մէջ հետզհետէ լոյս տեսնող լաւագոյն գործերով, փոխն ի փոխ մեր ասուլիսներուն նիւթ դարձնելով նաեւ թրքահայ գրականութեան ամէնէն համակրելի դէմքերը, միշտ, սակայն, առաջնորդուած այն իտէալէն, որով կ'ուզենք մեր գրողները աւելի խանդավառուած տեսնել